ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«05» 02 2025 թ.
№ ԱՄՆ-ԳԱԴ-119

«Պրոֆի Գրուպ» ՍՊ ընկերությանը
ՀՎՀՀ 05028672
ՀՀ, ք. Աշտարակ Երևանյան Շ 8/3
հեռ. +37455336666

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պրոֆի Գրուպ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 25.03.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-10/5-8 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը 2024թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 30 հատ արխիվի դարակաշարեր (դարակ մետաղյա 3 հարկանի), 200 հատ կախիչներ (կախիչ պատի 5 կեռ) և 50 հատ նստարաններ (նստարան ծալովի դաշտային), որոնց մասով Ընկերության կողմից մատակարարումը չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 51 օր)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. փետրվարի 7-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 1,870 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և 46,451 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 10.12.2024թ.:

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման նաև պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 38,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ 290,100 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը իրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թ. փետրվարի 17-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 38,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 290,100 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. փետրվարի 17-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2068 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ